

ՄԹՆՈԼՈԴՐՏԱՅԻՆ ՕՂ

Մթնոլորտային օդի աղտոտումը կարող է լինել բնական և մարդածին: Աղտոտման պատճառներ կարող են հանդիսանալ՝


- վառելիքի այրումը (էլեկտրաէներգիայի արտադրություն, տրանսպորտ, արդյունաբերություն և տնային տնտեսություններ),
- արդյունաբերական արտանետումները, լուծիչների օգտագործումը, օրինակ՝ քիմիական և հանքարդյունաբերության ոլորտում,
- գյուղատնտեսությունը,
- թափոնների բաց այրումը,
- բնական աղբյուրների, ներառյալ հրաբխային ժայթքումների, լեռնային փոշու տարածումը, բույսերից ցնդող օրգանական միացությունների արտանետումները և այլն:

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ, որոնք իրենց մեջ պարունակում են ծանր մետաղներ:

Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակություններն որոշելու համար 2023 թվականի 1-ին եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական և միջին շաբաթական կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են www.meteomonitoring.am ինտերնետային կայքում:

2023 թվականի 1-ին եռամսյակում մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է Երևան, Վանաձոր, Հրազդան, Գյումրի և Արարատ քաղաքներում:

Փոշով աղտոտվածությունը կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով:




Գծապատկեր 9. Մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների

2023 թվականի 1-ին եռամսյակում մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան չի գերազանցել է ՄԹԿ-ն:

Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:

Ազոտի երկօքսիդ (NO_2)

Կոնց. ($մգ/մ^3$)




Գծապատկեր 10. Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների

2023 թվականի 1-ին եռամսյակում մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ն:

Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծուրբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական գործընթացների ժամանակ:

Ծծմբի երկօքսիդ (SO_2)

Կոնց. ($մգ/մ^3$)





Գծապատկեր 11. Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների


Երևան

Երևան քաղաքում կատարվում են փոշու*, ծծմբի երկօքսիդի**, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան:


Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան մարտ ամսին 1.5 անգամ գերազանցել համապատասխան ՍԹՎ-ի արժեքը, իսկ փետրվարին՝ մոտ է եղել ՍԹՎ-ին: Ազոտի և ծծմբի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹՎ-ները:



*կախված մասնիկներ
**անհիդրիդ ծծմբային






Պճապատկեր 14. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Պճապատկեր 15. Երևան քաղաքի մթնոլորտային օդում զեղանակազատ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի SO₂ միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը






- Պայմանական նշաններ**
- Պասիվ նմուշառման դիտակետեր
 - Ակտիվ նմուշառման դիտակայաններ
 - Գետային ցանց
 - Ճանապարհներ և փողոցներ
 - Երկաթգծեր
 - Երևանի վարչական շրջաններ

Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (նգ/մ³)




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Երևանի վարչական շրջաններ

Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($\mu g/m^3$)






Գյումրի




Գյումրի քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է մեկ անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:

Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում որոշված փոշու միջին ամսական կոնցենտրացիան փետրվար ամսին գերազանցել է համապատասխան ՄԹԿ-ն՝ 1.1, իսկ մարտին՝ 1.6 անգամ:

Ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:




Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO₂) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը






Պայմանական նշաններ

-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակայաններ
-  Գետային ցանց
-  Ծանապարհներ և փողոցներ
-  Միջպետական ճանապարհ
-  Երկաթգծեր
-  Բնակավայրեր

Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO₂) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Պայմանական նշաններ

- Պատիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Միջպետական ճանապարհ
- Երկաթգծեր
- Բնակավայրեր


Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




Վանաձոր

Վանաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են երեք անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:


Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան փետրվար ամսին գերազանցել է ՍԹԿ-ն 1.4 անգամ: Ծծմբի և Ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 19. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 20. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները






Գծապատկեր 21. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Ալավերդի

Ալավերդի քաղաքում և հարակից համայնքներում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Գործում են երեք անշարժ դիտակայան և 42 շարժական դիտակետ:

Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:




Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ




- ◆ Պասիվ նմուշառման դիտակետեր
- ◆ Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Զանապարհներ և փողոցներ
- Միջպետական ճանապարհ
- Երկաթգծեր
- Բնակավայրեր










Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO₂) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Պայմանական նշաններ

-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակայաններ
-  Գետային ցանց
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Միջպետական ճանապարհ
-  Երկաթգծեր
-  Բնակավայրեր


Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




Հրազդան

Հրազդան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 17 շարժական դիտակետ:


Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն հունվար ամսին՝ 1.5 անգամ: Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 25. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները






Գծապատկեր 26. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 27. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտ երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

**Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO₂)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**






Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Գետային ցանց
- Բնակավայրեր
- Աղբյուրակ, ջրամբար

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO₂) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Գետային ցանց
- Բնակավայրեր
- Աղբյուրակ, ջրամբար


Արարատ

Արարատ քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 12 շարժական դիտակետ:


Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան մարտ ամսին 1.5 անգամ գերազանցել համապատասխան ՍԹԿ-ի արժեքը, իսկ փետրվարին՝ մոտ է եղել ՍԹԿ-ին: Ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 28. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 29. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 30. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Կապան

Կապան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 11 շարժական պասսիվ նմուշառման դիտակետ:

Կապան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 31. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 32. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Քաջարան

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 15 շարժական պասսիվ նմուշառման դիտակետ:

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 33. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 34. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Չարենցավան

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 10 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:



Գծապատկեր 35. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները






Գծապատկեր 36. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Օաղկածոր

Օաղկածոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 14 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Օաղկածոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:



Մթնոլորտային տեղումների որակ

2023 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Ծաղկաձորում վերցվել է մթնոլորտային տեղումների 9 նմուշ: Նմուշներից յուրաքանչյուրում որոշվել է տեղումների որակը բնութագրող 35-ական ցուցանիշ: Որոշված ցուցանիշներից մի մասի կոնցենտրացիաները բերված են Աղյուսակ 1-ում: Չներկայացված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի տարեկան տեղեկագրում:

Աղյուսակ 1. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.


<i>Ամսաթիվ</i>	<i>Ջրածնային ցուցիչ</i>	<i>Էլեկտրահաղորդականություն, մկՍմ/սմ</i>	<i>Սուլֆատ իոն, մգ/լ</i>	<i>Քլորիդ իոն, մգ/լ</i>	<i>Նիտրատ իոն, մգ/լ</i>	<i>Ամոնիում իոն, մգ/լ</i>
<i>03.02.2023</i>	<i>6.09</i>	<i>16.2</i>	<i>1.23</i>	<i>0.50</i>	<i>1.65</i>	<i>0.577</i>
<i>05.02.2023</i>	<i>5.76</i>	<i>18.3</i>	<i>1.22</i>	<i>0.91</i>	<i>2.41</i>	<i>0.469</i>
<i>06.02.2023</i>	<i>5.57</i>	<i>12.5</i>	<i>0.92</i>	<i>0.75</i>	<i>1.91</i>	<i>0.278</i>
<i>07.02.2023</i>	<i>6.16</i>	<i>22.8</i>	<i>2.05</i>	<i>0.51</i>	<i>1.56</i>	<i>0.338</i>
<i>08.02.2023</i>	<i>6.18</i>	<i>14.9</i>	<i>0.66</i>	<i>0.33</i>	<i>0.78</i>	<i>0.439</i>
<i>21.02.2023</i>	<i>6.02</i>	<i>29.6</i>	<i>2.70</i>	<i>1.25</i>	<i>2.91</i>	<i>1.293</i>
<i>04.03.2023</i>	<i>6.63</i>	<i>54.3</i>	<i>8.78</i>	<i>0.83</i>	<i>3.97</i>	<i>5.309</i>
<i>17.03.2023</i>	<i>6.34</i>	<i>33.0</i>	<i>2.72</i>	<i>0.81</i>	<i>3.04</i>	<i>1.160</i>
<i>20.03.2023</i>	<i>6.18</i>	<i>20.4</i>	<i>1.73</i>	<i>0.45</i>	<i>1.97</i>	<i>0.827</i>

Եվրոպայում մեծ տարածությունների վրա օդի աղտոտիչների տարածման մոնիթորինգի և գնահատման համատեղ ծրագիր


Մթնոլորտային օդ

Ամբերդի միջազգային կայանում 2023 թվականի 1-ին եռամսյակում կատարվել են մթնոլորտային օդի և փոշու դիտարկումներ: Մթնոլորտային օդի նմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու նմուշներում՝ քլորիդ, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 մետաղների պարունակությունները: Կատարված դիտարկումների վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն կտրվի տարեկան տեղեկագրում:

Ազոտի երկօքսիդի ($ՍԹԿ_{միջ.}=0.04մգ/մ^3$) և ամոնիակի ($ՍԹԿ_{միջ.}=0.04մգ/մ^3$) միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 40. Ամբերդի կայանում ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 41. Ամբերդի կայանում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Մթնոլորտային տեղումների որակ

2023 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Ամբերդի կայանում վերցվել է տեղումների 21 նմուշ: Նմուշներից յուրաքանչյուրում որոշվել է տեղումների որակը բնութագրող 35-ական ցուցանիշ: Որոշված ցուցանիշների կոնցենտրացիաները բերված են Աղյուսակ 3-ում: 1-ին եռամսյակում չներկայացված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի տարեկան տեղեկագրում.

Աղյուսակ 2. Ամբերդի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.

Ամսաթիվ	Ջրածնայի ն ցուցիչ	Էլեկտրահա ղորդականու թյուն. մկՍմ/սմ	Սուլֆատ իոն. մգ/լ	Քլորիդ իոն. մգ/լ	Նիտրատ իոն. մգ/լ	Ամոնիում իոն. մգ/լ
07.01.2023	6.3	42.4	3.512	2.503	4.034	1.885
08-09.01.2023	6.21	27.1	1.892	1.138	3.009	0.189
29-30.01.2023	6.93	46.5	3.300	0.767	1.844	0.477
31-01.02.2023	4.22	27.6	1.929	1.434	2.125	0.052
04-05.02.2023	6.98	66.5	2.013	3.086	1.806	5.802
05-06.02.2023	6.65	42.6	2.545	1.265	3.170	4.683
07-08.02.2023	7.74	34.4	1.172	0.912	0.860	0.746
10.02.2023	7.79	29.5	2.500	0.698	1.896	1.281
15.02.2023	6.13	25.4	1.872	0.862	2.898	0.563
19-20.02.2023	6.29	37.8	2.449	3.053	3.573	2.472
22.02.2023	6.24	31.2	2.962	2.377	1.613	1.053
02.03.2023	6.33	20.9	2.580	0.768	1.982	1.988
03-04.03.2023	7.20	42.6	4.200	0.662	2.920	0.729
09.03.2023	5.72	19.0	0.469	1.51	0.866	0.260
16-17.03.2023	6.81	35.1	3.071	0.362	3.000	0.780
17.03.2023	7.08	60.4	3.859	0.686	2.027	0.328
19-20.03.2023	7.02	41.9	2.123	0.592	0.386	0.245
20.03.2023	6.28	12.1	0.384	0.997	0.259	0.360
24.03.2023	5.66	6.7	0.978	0.0906	1.025	0.357
27.03.2023	6.10	13.7	1.705	0.148	1.645	1.216
28.03.2023	5.79	6.9	0.738	0.148	0.702	0.324